



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 136

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ, ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴԻՐԱՆՔ ՏԱԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հոդային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջների, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշումների պահանջների, հիմք ընդունելով Պտղնի համայնքի ավագանու 2020 թվականի նոյեմբերի 11-ի N 43 որոշումը և քաղաքացի Ղարիբ Քաջիկի Երվանդյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Պտղնի համայնքի վարչական տարածքում գտնվող Ղարիբ Քաջիկի Երվանդյանին սեփականության իրավունքով պատկանող 07-054-0315-0173 կադաստրային ծածկագրով (սեփականության վկայական N 21102020-07-0034) 0.10101 հա գյուղատնտեսական նշանակության արտադրային նպատակային նշանակությունը փոխել արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, ըստ գործառնական նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, գյուղատնտեսական մթերք վերամշակող տնտեսություն կառուցելու համար:
2. Ղարիբ Քաջիկի Երվանդյանին սեփականության իրավունքով պատկանող Պտղնի համայնքում գտնվող 07-054-0315-0173 կադաստրային ծածկագրով հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ գյուղատնտեսական մթերք վերամշակող տնտեսության կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:
3. Ղարիբ Քաջիկի Երվանդյանին պատկանող 07-054-0315-0173 ծածկագրով 0.10101 հա գյուղատնտեսական արտադրական հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ գ. Պտղնի 1-ին փողոց 6-րդ նրբանցք թիվ 4/6:
4. Հողի նպատակային նշանակության փոփոխությունը ներառել հոդային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հոդային հաշվեկշռում:
5. Որոշման կատարման հսկողությունը դնել Պտղնի համայնքի ղեկավարի տեղակալ Ռուբեն Ստամբոլցյանի վրա:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

07-Dec-20

X



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2020 թ. դեկտեմբերի 07
գ. Պտղնի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 137

ԱՎԵՏԻՍ ԷԼՄԱՃԵԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջների, հիմք ընդունելով քաղաքացի Ավետիս Համբարձումի Էլմաճեանի դիմումը և լիցենզավորված ճարտարապետի կողմից գծված նախագծի առկայությունը՝ **որոշում եմ.**

1. Ավետիս Համբարձումի Էլմաճեանին տալ սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-1 այգետարածք 13-րդ թաղամաս թիվ 16 (կադաստրային ծածկագրեր 07-054-0147-0026, սեփականության վկայական N 17092019-07-0064) հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասերում բնակելի տան, ավտոկացարանի և պարսպի կառուցման աշխատանքների շինարարության թույլտվություն:
2. Հանձնարարել Ավետիս Համբարձումի Էլմաճեանին շինարարական աշխատանքներն իրականացնել քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան:
3. Շինարարական աշխատանքները սկսել տեղական տուրքը վճարելուց հետո:
4. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ եռօրյա ժամկետում համայնքապետարան ներկայացնել տեղեկանք Ձև N 5-ը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

14-Dec-20

X 

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝
ՎԻՐԱԲՅԱՆ

ԱՌԱՔԵԼ

2020 թ. դեկտեմբերի 14
գ.Պատվանի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 138

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Մարինե Ռազմիկի Մաիլյանի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-3 այգետարածք 5-րդ թաղամաս թիվ 1 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում (կոդ 07-054-0203-0099) 2019-2020 թվականներին ինքնակամ կառուցված այգետնակը, աստիճանը և ծածկը: Համայնքի կադաստրային քարտեզի, որակավորված անձի կողմից գծված շինությունների և հողամասի հատակագծերի, տեղում կատարված ուսումնասիրությունից պարզվեց, որ Մարինե Ռազմիկի Մաիլյանի սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-3 այգետարածք 5-րդ թաղամաս թիվ 1 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում 2019-2020 թվականներին ինքնակամ կառուցվել է 189.02 քմ մակերեսով այգետնակ, 6.75 քմ մակերեսով աստիճան և 43.9 քմ մակերեսով ծածկ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9; 10; 11; 13 կետերի պահանջների, հիմք ընդունելով որակավորված անձի կողմից գծված շինությունների և հողամասի հատակագծերը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մարինե Ռազմիկի Մաիլյանի սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-3 այգետարածք 5-րդ թաղամաս թիվ 1 հասցեի բնակավայրերի նշանակության հողամասում ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ **որոշում եմ:**

1. Քաղաքացի Մարինե Ռազմիկի Մաիլյանի սեփականության իրավունքով պատկանող 2019-2020 թվականներին կառուցված 189.02 քմ մակերեսով այգետնակը, 6.75 քմ մակերեսով աստիճանը և 43.9 քմ մակերեսով ծածկը համարել օրինական:

2. Պարտավորեցնել քաղաքացի Մարինե Ռազմիկի Մաիլյանի ինքնակամ կառուցված շինությունների համար համայնքային բյուջե 900105225214 հաշվեհամարին վճարել 491460 (չորս հարյուր իննսուն մեկ հազար չորս հարյուր վաթսու) ՀՀ դրամ և 79020 (յոթանասուն ինն հազար քսան) ՀՀ դրամ:

3. Օրինականացման համար սահմանված վճարները 60 օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժի կորցրած:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

22-Dec-20

X 

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝
ՎԻՐԱԲՅԱՆ**

ԱՌԱՔԵԼ

2020 թ. դեկտեմբերի 22
գ. Պտղնի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 139

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Գևորգ Ռոբերտի Խաչատրյանի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի 1-ին փողոց 6-րդ նրբանցք 1-ին փակուղի թիվ 1 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում (կոդ 07-054-0315-0118) 2019 թվականին ինքնակամ կառուցված բնակելի տունը, ջրավազանը և ավտոկայանատեղին: Համայնքի կադաստրային քարտեզի, որակավորված անձի կողմից գծված շինությունների և հողամասի հատակագծերի, տեղում կատարված ուսումնասիրությունից պարզվեց, որ Գևորգ Ռոբերտի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի 1-ին փողոց 6-րդ նրբանցք 1-ին փակուղի թիվ 1 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում 2019 թվականներին ինքնակամ կառուցվել է 563.85 քմ մակերեսով բնակելի տուն, 41.96 քմ մակերեսով ջրավազան և 61.77 քմ մակերեսով ավտոկայանատեղի:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9; 10; 11; 13 կետերի պահանջների, հիմք ընդունելով որակավորված անձի կողմից գծված շինությունների և հողամասի հատակագծերը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գևորգ Ռոբերտի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի 1-ին փողոց 6-րդ նրբանցք 1-ին փակուղի թիվ 1 հասցեի բնակավայրերի նշանակության հողամասում ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝
որոշում եմ:

1. Քաղաքացի Գևորգ Ռոբերտի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող 2019 թվականին կառուցված 563.85 քմ մակերեսով բնակելի տունը, 41.96 քմ մակերեսով ջրավազանը և 61.77 քմ մակերեսով ավտոկայանատեղին համարել օրինական:
2. Պարտավորեցնել քաղաքացի Գևորգ Ռոբերտի Խաչատրյանին ինքնակամ կառուցված շինությունների համար համայնքային բյուջե 900105225214 հաշվեհամարին վճարել 1466010 (մեկ միլիոն չորս հարյուր վաթսուվեց հազար տաս) ՀՀ դրամ և 161820 (մեկ հարյուր վաթսուն մեկ հազար ութ հարյուր քսան) ՀՀ դրամ:
3. Օրինականացման համար սահմանված վճարները 60 օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

23-Dec-20

X 

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2020 թ. դեկտեմբերի 23
գ. Պտղնի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 140

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԸՆԴՀԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԶԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման պահանջների, հիմք ընդունելով Պտղնի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 11-ի N 52 որոշումը, կից սեփականատերերի դիմումները, հաշվի առնելով այն հանգամանքը, որ օտարվող հողամասերը հնարավոր չէ օտարել որպես առանձին միավոր աճուրդային կարգով՝ **որոշում եմ**.

1. Համայնքային սեփականություն հանդիսացող 0.0284 հա (սեփականության վկայական N 04122020-07-0088, ծածկագիր 07-054-0330-0058) գյուղատնտեսական նշանակության արտավայրը ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման նպատակով օտարել կից հողամասի (սեփականության վկայական N 10072018-07-0017, ծածկագիր 07-054-0330-0017) սեփականատեր Ռոլանդ Արտաշեսի Ավոյանին (նույնականացման քարտ 000539940, տրված 11.03.2013թ., 001-ից) 2000 ՀՀ դրամով, գյուղատնտեսական գործունեություն ծավալելու համար:

2. Համայնքային սեփականություն հանդիսացող 0.12166 հա (սեփականության վկայական N 04122020-07-0086, ծածկագիր 07-054-0331-0080) գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքն ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման նպատակով օտարել կից հողամասի (սեփականության վկայական N 2518743, ծածկագիր 07-054-0331-0024) սեփականատերեր Հակոբ Առաքելի Վիրաբյանին (անձնագիր AH0200463, տրված 20.05.2006թ., 019-ից) և Էլմիրա Վազգենի Վիրաբյանին (անձնագիր AH0451200, տրված 17.09.2007թ., 019-ից) 8300 ՀՀ դրամով, գյուղատնտեսական գործունեություն ծավալելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

23-Dec-20

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2020 թ. դեկտեմբերի 23
գ.Պատվանի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 141

ՏԱԹԵՎԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման պահանջների, հիմք ընդունելով Տաթևիկ Տիգրանի Սարգսյանի դիմումը և որակավորված անձի կողմից գծված հողամասի հատակագիծը՝ **որոշում եմ**.

1. Տաթևիկ Տիգրանի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի 11-րդ փողոց թիվ 15 հասցեում գտնվող (կադաստրային ծածկագիր 07-054-0022-0016, սեփականության վկայական N 04092019-07-0085) անշարժ գույքի բաժանումից առաջացած՝

1) S1 բաժանվող մաս - 0.05735 հա մակերեսով բնակավայրերի նշանակության հողամասին տրամադրել հասցե՝

Կոտայքի մարզ գ. Պտղնի 11-րդ փողոց թիվ 15,

2) S2 բաժանվող մաս - 0.04005 հա մակերեսով բնակավայրերի նշանակության հողամասին տրամադրել հասցե՝

Կոտայքի մարզ գ. Պտղնի 11-րդ փողոց թիվ 15/1, համաձայն բաժանման սխեմայի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

28-Dec-20

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 142

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆՈՐՄԱՏԻՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի պահանջների՝ **որոշում եմ**.

1. Պտղնի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 11-ի «Պտղնի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի N 55-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 45-Ն, «Պտղնի համայնքի վարչական տարածքում 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N 46-Ն և «Պտղնի համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 55-Ն որոշումները պաշտոնական հրապարակել 2021 թվականի հունվարի 08-ին:
2. Պաշտոնական հրապարակումն իրականացնել համայնքի տարբեր հատվածներում ցուցատախտակներին փակցնելու միջոցով:
3. Պաշտոնական հրապարակման պատասխանատվությունը դնել աշխատակազմի քարտուղարի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

30-Dec-20

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2020 թ. դեկտեմբերի 30
գ. Պտղնի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 143

ՖՐՈՒՆԶԵ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ՁԵՎԱՓՈԽՎԱԾ ՊԱՏՈՒՀԱՆԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Ֆրունզե Վլադիկի Վարդանյանի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի-3 այգետարածք 5-րդ թաղամաս թիվ 12 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում (ծածկագիր 07-054-0201-0052) 2018 թվականին ինքնակամ կառուցված շինությունները և ինքնակամ ձևափոխված թվով 1 պատուհանը: Համայնքի էլեկտրոնային քարտեզից, որակավորված անձի կողմից գծված հողամասի և շինությունների հատակագծերից և տեղում կատարված ուսումնասիրությունից պարզվեց, որ Ֆրունզե Վլադիկի Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-3 այգետարածք 5-րդ թաղամաս թիվ 12 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում 2018 թվականին ինքնակամ կառուցվել է 300.2 քմ մակերեսով այգետնակ, 31.2 քմ մակերեսով լողավազան և 4.7 քմ մակերեսով պարիսպ, ինչպես նաև առկա է ինքնակամ ձևափոխված թվով 1 պատուհան:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8.1; 9; 10; 11; 12; 13; 18 կետերի պահանջների, հիմք ընդունելով որակավորված անձի կողմից գծված հողամասի և շինությունների հատակագծերը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինքնակամ ձևափոխված թվով 1 պատուհանի և ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ **որոշում եմ**:

1. Ֆրունզե Վլադիկի Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ.

Պտղնի Պտղնի-3 այգետարածք 5-րդ թաղամաս թիվ 12 հասցեում գտնվող բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում 2018 թվականին ինքնակամ կառուցված 300.2 քմ մակերեսով այգետնակը, 31.2 քմ մակերեսով լողավազանը և 4.7 քմ մակերեսով պարիսպը, ինքնակամ ձևափոխված թվով 1 պատուհանը համարել օրինական:

2. Պարտավորեցնել քաղաքացի Ֆրունզե Վլադիկի Վարդանյանին 2018 թվականին կառուցված շինությունների և ինքնակամ ձևափոխված թվով 1 պատուհանի համար համայնքային բյուջե 900105225214 հաշվեհամարին վճարել 839 130 (ույթ հարյուր երեսուն ինը հազար մեկ հարյուրերեսուն) ՀՀ դրամ:

3. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

30-Dec-20

X



**ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝
ՎԻՐԱԲՅԱՆ**

ԱՌԱՔԵԼ

2020 թ. դեկտեմբերի 30
գ.Պտղնի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 144

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԴԱՎԻԴՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԻՆՔՆԱԿԱՄ ՁԵՎԱՓՈԽՎԱԾ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ԵՎ ԴՌՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Ալեքսանդր Սերգեյի Դավիդյանի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-1 այգեզանգված 11-րդ թաղամաս թիվ 27 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում (ծածկագիր 07-054-0146-0009) 2018-2020 թվականներին ինքնակամ կառուցված շինությունները և ինքնակամ ձևափոխված թվով 5 պատուհանները և դռները: Համայնքի էլեկտրոնային քարտեզից, որակավորված անձի կողմից գծված հողամասի և շինությունների հատակագծերից և տեղում կատարված ուսումնասիրությունից պարզվեց, որ Ալեքսանդր Սերգեյի Դավիդյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-1 այգեզանգված 11-րդ թաղամաս թիվ 27 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում 2018-2020 թվականներին ինքնակամ կառուցվել է 125.5 քմ մակերեսով այգետնակ, 3.15 քմ մակերեսով զուգարան, 2.64 քմ մակերեսով աստիճան, 4.34 քմ մակերեսով հենապատ և 11.21 քմ մակերեսով պարիսպ, ինչպես նաև առկա է ինքնակամ ձևափոխված թվով 5 պատուհան և դուռ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8.1; 9; 10; 11; 12; 13; 18 կետերի պահանջների, հիմք ընդունելով որակավորված անձի կողմից գծված հողամասի և շինությունների հատակագծերը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինքնակամ ձևափոխված թվով 5 պատուհանների, դռների և ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ **որոշում եմ**:

1. Ալեքսանդր Սերգեյի Դավիդյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-1 այգեզանգված 11-րդ թաղամաս թիվ 27 հասցեում գտնվող բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում 2018-2020 թվականներին ինքնակամ կառուցված 125.5 քմ մակերեսով այգետնակը, 3.15 քմ մակերեսով զուգարանը, 2.64 քմ մակերեսով աստիճանը, 4.34 քմ մակերեսով հենապատը և 11.21 քմ մակերեսով պարիսպը, ինքնակամ ձևափոխված թվով 5 պատուհաններն ու դռները համարել օրինական:

2. Պարտավորեցնել քաղաքացի Ալեքսանդր Սերգեյի Դավիդյանին 2018-2020 թվականներին կառուցված շինությունների և ինքնակամ ձևափոխված թվով 5 դռների, պատուհանների համար համայնքային բյուջե 900105225214 հաշվեհամարին վճարել 372 600 (երեք հարյուր յոթանասուներկու հազար վեց հարյուր) ՀՀ դրամ:

3. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

30-Dec-20

X



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2020 թ. դեկտեմբերի 30
գ.Պտղնի